



### Բ. Կիրակի Քառասնորդաց: Արտաքսումն Ադամայ ի Դրախտէն



#### ԺԱՄԱՄՈՒՏ

Միածին Որդի եւ Աստուծոյ Խօսք, եւ անմահ՝ Եւրթիւն, որ յանձն առիր մարմնաւալ Սուրբ եւ միշտ Կոյս Աստուածածինէն, անփոփոխելիդ՝ մարդ դառնալով խաչ-լեցար, Քրիստո՛ս Աստուած եւ մահովդ՝ մահը խորտակեցիր. մին անձերէն՝ Ամենասուրբ Երրորդութեան, արժանի փառքի՝ Հօր եւ Հոգւոյն հետ փրկե՛ մեզ:

#### ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԴՉ.

Դրախտին մէջ, նախ ավանդեցիր սուրբ պահեցի օրէնքը, զոր նախաստեղծները պտուղին ճաշակմամբ չպահելով, մեղքի եւ մահուան դառնութիւնը ճաշակեցին. ուստի Տեր, պատուիրաններուդ քաղցրութիւնը ճաշակել շնորհե՛ մեզի:

Մեղքերու զանազան վերքերով զարնուեցանք թշնամիէն, մեր հոգիին մէջ, եւ մեր բազմատեսակ հիւանդութիւններուն մէջ, մարդասերիդ կարօտացանք մեր ցաւերը փառատելու համար, ուստի Քրիստոս, որպէս մարդասեր բժշկե՛ մեզ:

Կոյս Մարիամին ծննդեամբ մարդիկը փրկելու եկար եւ Քու կենդանարար յարու-  
թեամբդ մահկանացուներս անմահական յարութեան հրաւիրեցիր. ուստի Քու մօրդ ա-  
ղաչանքով փրկէ՛ մեզ, Փրկիչ:

### **ՄԵՍԵՂԻ (Սղմ. 64, 2 եւ 3)**

Աստուած իմ, Սիոնի վրայ կատարուած փառաբանութիւնը միայն քեզի կը  
վայելէ եւ Երուսաղէմի մէջ քեզի աղօթքներ թո՛ղ բարձրանան:

Աղօթքներս լսէ՛, եւ ամէն մարմնաւոր Էակ՝ քեզի թո՛ղ գայ, քեզի թո՛ղ դիմէ:

## **ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ԻՍՐԱՅԷԼԻ ԴԱՐՁԸ**

**Պօղոս Առաքեալին Գոմբացիներուն ուղղած Թուղթէն Է ընթերցուածը.**  
(Յռ. 12, 1-21)

Եղբայրներ՛ր, կը յորդորեմ ձեզ յանուն  
Աստուծոյ գթութեան, որ դուք ձեզ ընծա-  
յէք Աստուծոյ իբրեւ կենդանի, սուրբ եւ  
հաճելի զոհեր: Թո՛ղ այս ըլլայ ձեր հոգե-  
ւոր պաշտամունքը: Մի՛ կերպաւորուիք  
ներկայ աշխարհիս համաձայն, այլ կեր-  
պարանափոխուեցէք ձեր իմաստու-  
թեան վերանորոգումով, որպէսզի գիտ-  
նաք Աստուծոյ կամքը եւ ինչ որ բարի է,  
ինչ որ Աստուծոյ հաճելի է ու կատար-  
եալ: Յանուն ինձի տրուած շնորհքին,  
կ'ըսեմ ձեզմէ իւրաքանչիւրին՝ դուք ձեզ  
մի՛ գերազնահատէք անելի քան ինչ որ է  
ձեր արժանիքը, այլ ունեցէք դուք ձեր  
մասին իմաստուն գնահատանք մը ըստ  
հաւատքի չափին, զոր Աստուած տուաւ:  
Ինչպէս որ մեր մարմինը իր ամբողջա-  
կանութեան մէջ ունի բազմաթիւ անդամ-  
ներ եւ այս անդամները բոլորը նոյն պաշ-  
տօնը չունին, այնպէս ալ մենք, բազմա-  
թիւ ենք, սակայն կը կազմենք մէկ մար-  
մին Զրիստոսով. իրարու անդամներ ենք,  
իւրաքանչիւրը իրեն տրուած չափով:

Ունինք պարգէւներ, որոնք կը տար-  
բերին մեզի տրուած շնորհքին համա-  
ձայն. եթէ մարգարէութիւն է, կիրարկենք  
զայն համեմատաբար հաւատքին: Եթէ  
պաշտօն է՝ ծառայելով, եթէ վարդապե-  
տութիւն է՝ սորվեցնելով, եթէ մխիթարու-  
թիւն է՝ մխիթարելով: Ով որ կու տայ,  
անհաշիւ թո՛ղ տայ, ով որ կը նախագա-  
հէ՛ եռանդով, ով որ ողորմութիւն կ'ընէ՛

ուրախութեամբ թո՛ղ տայ: Ձեր սերը թո՛ղ  
անկեղծ ըլլայ: Ատեցէք չարը եւ սիրեցէք  
բարին: Չիրար սիրեցէք եղբայրական  
փոխադարձ սիրով, մրցակցելով փոխա-  
դարձ գնահատանքով: Ծառայեցէ՛ք Տի-  
րոջ անհեղձ եռանդով, եռացող հոգիով:  
Ուրախ եղէք յոյսի մէջ, համբերող՝ նեղու-  
թեան մէջ, յարատեւող՝ աղօթքի մէջ:  
Մասնակից եղէք սուրբերու կարիքնե-  
րուն, եռանդոտ հիւրասիրութիւն ցոյց  
տուէք: Օրհնեցէ՛ք ձեզ հալածողները,  
օրհնեցէ՛ք եւ մի՛ անիծէք: Ուրախացէ՛ք  
անոնց հետ, որ ուրախ են, լացէ՛ք անոնց  
հետ, որ կու լան: Համախոհ եղէք իրա-  
րու, սնափառութիւն մի՛ սնուցանէք ձեր  
մէջ, զիջող եղէք խոնարհներուն: Դուք  
ձեզ իմաստուն մի՛ համարիք: Ոչ մէկուն՝  
չարիքին չարիքով մի՛ հատուցանէք.  
բարին խորհեցէք բոլորին առջեւ: Եթէ  
հնարաւորութիւն ունիք, խաղաղութիւն  
պահեցէք բոլորին հետ: Սիրելիներ՛ր, դուք  
ձեզի համար վրեժխնդիր մի՛ ըլլաք, այլ  
թողուցէք որ Աստուծոյ բարկութիւնը  
գործէ, որովհետեւ գրուած է. Իմս Է վրեժ-  
խընդորութիւնը, ես պիտի հատուցանեմ,  
կ'ըսէ Տէրը:

Եթէ թշնամիդ անօթի է, կերցո՛ւր  
անոր, եթէ ծարաւի է, խմցո՛ւր անոր.  
այսպէս ընելով՝ հրաբորբոք կայծեր կը  
կուտակես անոր գլխուն վրայ: Մի՛ յաղ-  
թահարուիր չարէն, այլ՝ բարիով յաղթ  
չարին:

## **Ալէլուիա, Ալէլուիա,**

Ո՛վ դուք երկիրներդ բոլոր, ձեր ձայնը բարձրացուցէ՛ք  
դէպի Տէրը եւ Տիրոջ ուրախութեամբ ծառայեցէ՛ք:

(Սաղմոս 99, 1)

## **Ալէլուիա:**

## **ԱԲԵՏԱՐԱՆ**

### **ԱՂՕԹԸ, ԾՈՍԱՊԱՅՈՒԹԻՒՆ ՈՒ ՈՂՈՐՍՈՒԹԻՒՆ**

(Մատթեոս 5, 17-30)

«Մի՛ կարծեք թէ եկած եմ Օրէնքն ու Մարգարէները ջնջելու: Չեմ եկած ջնջելու, այլ՝ լրացնելու: Ըշմարիտ կ'ըսեմ ձեզի, երկինքն ու երկիրը իրենց վախճանին չհասած, յովտ մը կամ նշանագիր մը պիտի չանցնի Օրէնքէն, մինչեւ որ ամէն բան կատարուի: Ով որ ուրեմն զանց առնէ փոքրագոյնը պատուիրաններուն եւ այնպէս ալ սորվեցնէ, փոքր պիտի ըլլայ երկինքի Արքայութեան մէջ: Իսկ ով որ զանոնք գործադրէ եւ սորվեցնէ՝ մեծ պիտի ըլլայ երկինքի Արքայութեան մէջ: Կ'ըսեմ ձեզի, եթէ ձեր արդարութիւնը չզերագանցէ դպիրներունն ու փարիսեցիներունը՝ պիտի չմտնէք երկինքի Արքայութեան մէջ»:

«Գիտեք որ ըսուած էր հիներուն. Մի՛ սպաններ եւ մարդասպանը պատասխանատու է դատարանին առջեւ: Ես կ'ըսեմ ձեզի. ով որ իր եղբոր բարկանայ, պարտաւոր պիտի ըլլայ դատաստանի. եթէ յիմար կոչէ զինք, պիտի կանչուի Ատեան, իսկ ով որ «ուրացող» ըսէ, արժանի պիտի ըլլայ Գեհենի կրակին: Երբ

երթաս ընծադ նուիրելու խորանին եւ հոն յիշես որ եղբայրդ ոխ ունի քու դէմդ, ձգէ ընծադ խորանին առջեւ, գնա՛ նախ հաշտուէ եղբորդ հետ եւ ապա եկուր ընծադ նուիրէ»:

«Շուտով համաձայնէ թշնամիիդ հետ, մինչ տակաւին անոր հետ ճամբան ես, որ մի գուցէ ան քեզ դատաւորին յանձնէ եւ դատաւորը՝ բանտապահին ու բանտ նետուիս: Կ'ըսեմ քեզի, անկէ պիտի չէլլես, մինչեւ որ վերջին դահեկանը չվճարես: Գիտեք որ ըսուած էր հիներուն. Մի՛ շնար: Ես կ'ըսեմ ձեզի, ով որ կնոջ նայի անոր ցանկանալով, արդէն իսկ իր սրտին մէջ շնացաւ անոր հետ: Եթէ աջ աչքդ քեզի մեղքի առիթ է, հանէ զայն եւ նետէ քեզմէ հեռու: Զեզի համար աւելի լաւ է որ անդամներդ մէկը կորսուի, քան ամբողջ մարմինդ գահավիժի Գեհենին մէջ: Եթէ աջ ձեռքդ քեզի մեղքի առիթ է, կտրո՛ւ զայն ու նետէ քեզմէ հեռու: Զեզի համար աւելի լաւ է որ անդամներդ մէկը կորսուի քան ամբողջ մարմինդ գահավիժի Գեհենին մէջ»:

## **ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ**

Արդէն իսկ այսօր մուտք կը գործենք քառասնորդաց շրջանի երկրորդ շաբաթը: Ինչպէս առաջին շաբաթը, այսօր ալ նոյնպէս մեր Աւետարանի հատուածը կու գայ մեզի փոխանցելու կարգ մը կարեւոր կէտեր, ինչպէս նաեւ կատարելու վերոյիշեցումներ մեզի, մեղաւորներուն եւ աշխարհիկ հոգեբով տարուողներուն:

1. Մեր այսօրուան Աւետարանի հատուածը կը սկսի մեզի յիշեցնելով

թէ կանչուած ենք պահելու Աստուծոյ պատուիրանները, եւ ոչ միայն պահելու, այլ նաեւ զանոնք սորվեցնելու եւ այդ ալ ճիշդ ձեւով, առանց ոչ մէկ բառ դուրս ձգելու: Պիտի ըսէք «փառք Աստուծոյ որ բոլոր պատուիրանները կը պահենք, կ'աղօթենք, մարդ չենք սպաններ եւ այլն...»: Սիրելի քոյրս եւ եղբարս, թոյլ տուր որ քեզի յիշեցնեմ թէ Հին Կտակարանին մէջ ունինք 10 պատուիրաններ իսկ Նոր Կտակարան-



նին մէջ 2 սիրոյ պատուիրաններ, հետեւաբար մարդ միայն չսպաննելով չէ որ պիտի փրկուի, այլ այն բոլոր պատուիրաններով որոնք աշխարհի սկիզբէն իր ամօշեւը դրուած են որպէսզի անոնք ըլլան մարդուն ուղղութիւնը եւ զինք սրբութեան տանող ճամբան: Սակայն հարցը եւ հարցումը հետեւեալն է. «Կ'ուզե՞ս հասնիլ սրբութեան, թէ ուրախ ես քու այս վիճակովդ՝ լեցուն յուսահատութիւններով եւ մեղքերով»:

2. Մեր այսօրուան Աւետարանի երկրորդ բաժինը մեզի կը խօսի բարկութեան եւ սպանութեան մասին: Պիտի ըսէք. «բարկութեան մէջ ո՞ր է մեղքը... մարդ ենք, կը բարկանանք, պարզ բան մըն է»: Ծիշդ ես սիրելի քոյրս եւ եղբայրս, մարդ ենք եւ տկար, որեւէ մէկ պահուն կրնանք բարկանալ կասկած չկայ, բայց Յիսուս պարզապէս բարկանալու մասին չէ որ կը խօսի, այլ այն բարկութեան մասին որուն արդիւնքը մեղք է, այսինքն երբ իմ բարկութիւնս չեմ կրնար սահմանել, եւ իշխանութենէս դուրս ելլելով մեղք կը գործեմ, որոնցմէ է սպանութիւնը՝ զէնքով եւ կամ ալ լեզուով: Սիրելիներ, մեր լեզուներուն ուժը այնքան մեծ եւ զօրաւոր է որ երբ մէկը կը սպաննենք, հաւատացե՛ք որ զայն բուժելը եւ կրկին իր նախկին վիճակին դարձնելը շատ դժուար

եւ գրեթէ անկարելի պիտի ըլլայ: Զետեւաբար, ուշադիր ըլլանք որ չարը անկարող ըլլայ մեզ հասցնելու այս վիճակին եւ այս մեղքին: Կ'ուզե՞ս հեռու մնալ ծանր բարկութենէն, զգոյշ եղիր քու մէջդ միշտ պահելով քու Զայրդ եւ քեզի տրուած Ս. Զոգին:

3. Մեր այսօրուան Աւետարանի երրորդ բաժինը կու գայ շօշափելու շատ կարեւոր եւ էական նիւթ մը, որուն այսօր ականատես ենք բոլորս, ի տես մեր շուրջը պատահածներուն: Այդ նիւթը շնութիւնն է: Սիրելիներ, շնութեան ձեւերը երկու են. նախ աչքով եւ մտքով (զգայարանքներով) որմէ ետք կու գայ գործը եւ կամ գործով, ինչպէս կ'ըսէ Աւետարանին հատուածը. այն բանը որ քեզի գայթակղութեան պատճառ կ'ըլլայ կտրէ եւ նետէ, որպէսզի այդ մէկը քեզի պատճառ չըլլայ զրկուելու երկնքի փառքէն եւ արքայութենէն. Ըսինք կտրէ եւ նետէ, բնական է որ Յիսուս մեզմէ չի խնդրեր այն բանը որ ինք ստեղծած է մենք մեր ձեռքով կտրենք եւ մէկ կողմ նետենք, բնական է որ այդպէս չըլլայ, եթէ ոչ ինչո՞ւ մեզի տուաւ այս բոլոր զգայարանքները, մեզի մեղքի առի՞թ տալու: Վստահ ոչ, գերագոյն Բարիքը չի կրնար այսպիսի բան ընել, այլ պարզապէս մեզի կ'ուզէ հասկցնել թէ պետք է քաջութիւնը ունենանք միշտ պայքարելու մեր ցանկութիւններուն դէմ եւ զանոնք արմատախիլ ընենք մեր մէջէն՝ անշուշտ քայլ առ քայլ, եւ մեր երկնաւոր Զօր օգնութեամբ եւ ընկերակցութեամբ:

Ահաւասիկ սիրելիներ մեր այսօրուան Աւետարանին պատգամը. Պահենք Աստուծոյ պատուիրանները, միշտ ունենանք մեր մէջ իր խաղաղութիւնը որպէսզի չարը չյաջողի մեր բարկութեան պատճառով մեզ մեղքի տանիլ, եւ ամենակարեւորը՝ օգտագործենք մեր բոլոր զգայարանքները՝ զինք փառաբանելու եւ օրհնաբանելու յաւիտեանէ յաւիտեան: Ամէն: